



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»**  
**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 24 » հունվարի 2021թ. 84-Ձ  
 ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ**  
**ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ու հիմք ընդունելով ռազմական արտադրանքի ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 23-ի N 1 արձանագրությունը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Ընդունել և 2022 թ. հունվարի 1-ից գործողության մեջ դնել հետևյալ ազգային ստանդարտները՝

- ՀՍ 2.124-2021 «Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. էլեկտրոնային փաստաթղթեր. Ընդհանուր դրույթներ»,

- ՀՍ 2.418-2021 «Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Փաթեթավորման համար կոնստրուկտորական փաստաթղթերի կատարման կանոններ»,

- ՀՍ 19.201-2021 «Ծրագրային փաստաթղթերի միասնական համակարգ. Տեխնիկական առաջադրանք. Բովանդակությանը և ձևակերպմանը ներկայացվող պահանջներ»,

- ՀՍ 2.125-2021 «Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Էսքիզային կոնստրուկտորական փաստաթղթերի կատարման կանոններ. Ընդհանուր դրույթներ»,

- ՀՍ 14.201-2021 «Արտադրատեսակների կառուցվածքի տեխնոլոգիամիտության ապահովում. Ընդհանուր պահանջներ»:

2. 2022 թ. հունվարի 1-ից չեղյալ հայտարարել հետևյալ ստանդարտները՝

ԳՕՍ 2.418-2008 «Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Փաթեթավորման կոնստրուկտորական փաստաթղթերի կատարման կանոններ»,

ԳՕՍ 2.125-2008 «Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Ուրվագծային կոնստրուկտորական փաստաթղթերի կատարման կանոններ. Ընդհանուր դրույթներ»:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ Մ. Բզնունուն:

**ՏՆՕՐԵՆ**

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

**ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ**